«Ուղղակի ժողովրդավարություն»
ժողովրդավարական ինստիտուտների
ամրապնդման ՀԿ

Հասցե՝ քաղաք Վանաձոր,
Տիգրան Մեծի 47/13-1

Հեռ. (+374) (98) 200-166

DIRECT DEMOCRACY
For Consolidation Of Democratic Institutions NGO

*´´Direct democracy´´ NGO for consolidation of democratic institutions*

*Address: Lori Region, Vanadzor, Tigran Mets 47/13-1*

*Tel. (+374) (98) 200-166*

Թիվ 01/267
16.12.2025թ.

ՀՀ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանին

## Հ Ա Ր Ց Ու Մ

Հարգելի պարոն Մկրտչյան

Վանաձորի համայնքապետարանը չի պատասխանում կազմակերպության կողմից ուղարկված հարցումներին, ուստի ստիպված ենք կրկին դիմել Ձեզ:

Վանաձորի համայնքապետարանի կողմից իրականացված բյուջեի մասին հանրային քննարկման ժամանակ կազմակերպության ներկայացուցչի կողմից բազմաթիվ հարցեր են բարձրաձայնվել և երկու օր անց գրավոր տարբերակով առաջարկություն է ուղարկվել համայնքապետարան՝ բյուջեի մի շարք տողերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, որին համայնքապետարանը մինչ օրս չի արձագանքել:

Վերոնշյալից ելնելով խնդրում ենք քննարկել Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի հետ և տրամադրել տեղեկատվություն, թե արդյոք միայն մեր կազմակերպությունն է ներկայացրել նմանատիպ առաջարկություն թե ոչ, արդյոք Արդարադատության նախարարությանն ուղարկված բյուջեի նախագծային տարբերակում «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ի կամ այլոց առաջարկները փոփոխություններ կատարելու մասին ներառվել են թե ոչ:

Հարգանքով՝ «Ուղղակի ժողովրդավարություն»

ՀԿ նախագահ Գ. Քոթանչյան

16.12.2025թ.